ԿԻՕՏՕՆ ԳԻՇԵՐԸ

Կիոտօն մեծ կենդանութիւն է ստանում գիշերը: Փողոցի երկու կողմից վառւում են գոյնզգոյն թղթէ մեծ լապտերներ, խանութները լցւում են լոյսով, իսկ փողոցները կեանքով:

Բազմութիւնը հոսում է առաջ. ոչ մի աղաղակ, ոչ մի հայհոյանք, ոչ մի կոպիտ ձայն այդ հազարգլխանի զանգւածի մէջ: Ոչ հարբածի կը հանդիպես այդտեղ, ոչ էլ իրանց պահել չը գիտցող անձերի: Օդի մէջ լսւում է փայտէ կօշիկների ամուր թրխկոցը: Ինչ վերաբերում է կարգապահութեանն ու վայելչութեանը, ճապոն ամբոխը իր նմանը չունի աշխարհիս երեսին:

Փոքրիկ խանութները բառի բուն նշանակութեամբ ողողւած են էլեքտրական պայծառ լոյսով եւ յիշեցնում են պարահանդիսի քիօսկները, շուրջը վխտող ամբոխով: Տրօտուարից զուրկ, հարթ ու նեղ փողոցը, որ մի սովորական դահլիճից բոլորովին լայն չէ, աւելի մեծացնում է այս նմանութիւնը: Ցուցադրած առարկաներն աւելի որոշակի աչքի են ընկնում փողոցի համեմատական մթութեան շնորհիւ:

Հէնց որ կանգ ես առնում մի խանութի առաջ, զգում ես իսկոյն, որ քեզ շրջապատել են: Ետեւիցդ եկողները իրանք էլ կանգ են առնում օտարականին մի աւելորդ անգամ եւս դիտելու համար. նորերը միանում են սրանց այդ համախմբումից հետաքրքրւած, եւ շուտով տեսնում ես քեզ մի լայն շրջանակի կենտրոնում, որ խանգարում է փողոցի երթեւեկութիւնը:

Զննում են լուռ ու շատ աւելի ուշադիր, քան թէ ցերեկը, բայց նրանց այդ զննելու եղանակը ոչ մի անախորժութիւն չի պատճառում. նրանց հետաքրքրութիւնը ոչ կոպիտ է, ոչ էլ